ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐԲՈՂ

(Նեկրասով)

Բարի գործեր են կեանքդ զարդարում,
Նոցա չի հասնի ոչ ոք իւր գործով.
Եւ—օ՜հ, երկինքն եմ ես վրկայ բերում,
Որ քեզ յարգում եմ խորին յարգանքով...

Դու ճանեին անգամ չես հասցնի չարիք,
Պատրաստ ես օգնել ե՛ւ չարագործին.
Եւ չե՞ն զողնովի քո անբաւ բարիք,
Չե՞ս զրկած անտէր այրիին, որբին։

Որպէս զի գործքերդ երթան աչողակ,
Չե՞ս ձրգտում «հրզոր մարդու» խնամութեան,
Եւ ծուռ մրտքով չես նորա հետ մենակ
Թողնում քո հասուն, սիրուն աղջրկան։

Չե՞ս գարշում երբէք դու անուս, կոպիտ
Ռամկական դասի անմաքուր տեսքից,
Եւ մեծամտուս ազգակիցներիդ
Բռունցքով չե՞ս քշում քո դրռան շէմքից։

Չե՞մ հարցնիլ—ո՞ւսկից եւ ե՞րբ ձեռք բերար
Այդ բոլորն, ինչ որ դու ունես հիմա.

Գիտեմ, քո ազնիւ գործերի համար—
Ո՞ղջը երկնից է թափուել քո վերայ...

Բարի գործեր են կեանքդ զարդարում,
Նոցա չի հասնի ոչ ոք իւր գործով.
Եւ—օ՜հ, երկինքն եմ ես վրկայ բերում,
Որ քեզ յարգում եմ խորին յարգանքով...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ